լերինան Վրաց և Եգերաց ընդ Կաթաքեւի, Լոմիսա, Բերսաթի, Իբիսիքարոյ, Սոթիմերի, Բերենկայ և Քուլովայ, և ժամանէ մօտ ցերան Ճորոխ գետոյ և յայնմ Սեաւ Ծովու։ Ըստ այսմ և 'ի հարաւոյ կուսէ Երասխայ մարթ է յերկարաձգել զլերինքս ցարձրագոյնն լերանց Արարատականի Սառեան, 12200', զի ոստս ընդ արևմուտս հիւսիսոյ ձգէ սա մինչև մերձ Յերասխ և 'ի սահմանս Որդուատայ՝ ուր յանդէր հարաւային թեւ երկայնաձիգ պարուն։

8. Յարեւմտեան կամ 'ի միջին Հայս՝ երեք պարք լերանց զուգահեռականք ճանաչին ջրբաժինք երից գետոցն հզօրաց, Երասխայ, Եփրատայ և Տիգրիսի. յորոց մի է Ե Պարն ԵՓՐԱՏԱԿԱՆ լերանց որք ձգին ընդ արևմուտս 'ի Փոքր Հայս ԿԱՆտիտաւրոս լերինս. 'ի Հայս ոստք նորա են արևմտեայ լերինք Բարձր Հայոց, Լէրինֆ Դարանաղէաց յայնմ գետոյն, և բարձրակատարն Սեպուհ կամ Գոհանամ, յորոց հիւսիսոյ Քէպան, Զինն և Իմաւէ լերինք ընդ Փոքր և Մեծ Հայս, և մերձ խաղաւեաց լերանց։ Արևմտեան թեւք լերանցս առեալք յոստոց լերանց Կարնոյ և Ղարսայ (Տ) ձգին ընդ մէջ Փ. Հայոց ցԱրգէոս լեառն. որովհետև երկայնութիւն յարակից պարուցն յափանց Երասխայ առ Կաղզուանաւ ցկէսարիա՝ իբրև 500 մղոն։

Զ. ՋՐԲԱԺԻՆՔ ԵՐԱՍԽԱՑ և Եփրատայ կամ Մուրատայ, պարք լերանց յաղթք և երկայնք, զոր մարթ է կոչել այժմու անուամբք ՊԻՆԻԷՕԼ–ԱՌԷԸ, զի յերկոցուն բաղկայ լերանցս յարատձգի, և կամ թէ բնիկ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐ. քանզի յարևելից 'ի Մասեաց սկսեալ անընդհատ և անանջրպետ ձգի ընդ արևմուտս, աղեղնաձեւ ելեալ զուգահեռական Երասխայ ցաղբիւր նորա 'ի Պինկիէօլ. յորոյ մոլոր կուսէ անանջատ ոստովք ձգեալ ժամանէ մինչև յԵփրատ և 'ի սահմանն Հայոց առ Ակնաւ, երկայնեալ իբրև 300 մղոն, ընդմիջելով զամենայն միջին և զարևմտեան Հայաստան ըստ 39° լայնութեան, որ և միջին ասասցեան է լայնութեան աշխարհիս մերոյ։ Կենդրոն պարուս համարելի է Պինկիէօլ լայնատարածն քան զամենայն լերինս Հայոց, և արձանացեալ ընդ մէջ երից հնոց աշխարհացն՝ Բարձր Հայոց, Ճորրորդ Հայոց և Տուրուբերանի, արձակելով գետս օժանդակս Երասխայ, Եփրատայ և Մուրատայ. բնիկ Պինկիէօլ (ոչ Բիւրական լեառն, զի չիք այսպիսի կոչումն առ Նախնիս, այլ Սրմանց կամ Սեբմանց լեառն) բարձր թուի քան զ'11000'. 'ի հիւսիսոյ նորա կան Լէրինֆ Կեղոյ (Խորձենոյ), Շուշարայ և Թեքմանայ, և ոլք 'ի հարաւոյ Կարնոյ՝ Փալանքէօֆէն և Շղալար. 'ի հարաւոյ լերինք Վարդոյ, և 'ի հարաւոյ մոլոր լերինք Ճապաղջրոյ, յորոց մոլոց այլք, և Մնյոր ցգետն Եփրատ. զորս Քրդաց կալեալ է և ոչ են քաջ ծանուցեալք, այլ թուին 9000' բարձր. և ըստ հիւսիսոյ նոցա Քէօշէր իբր 12000', Սբրոր 10000', և Տոնիկ լերինք ցնոյն Եփրատ և ցկամախ։ Ի հարաւոյ ելից մեծի լերինն՝ ընդ մէջ Մուրատայ և Գալէ–սու օժանդակի նորուն՝ Զէռանոգ և Խամոր լերինք։ Այլ գլխաւոր բաղուկ Պինկիէօլայ ձգի ըստ հիւսիսի արևելից և գրեաթէ աղեղաձեւալ ժամանէ ցարարատեանն Մասիս, լեռնողամբքն Զէռն, Դէղրոֆ, Քաղէն, Շէռեան, Քէօռէ–պաղ որ է Սոխա 9–10000', Շահ–էօլ 8950', Զէռմէռ. որոց ըստ հիւսիսի արևելից Քէօրօղլու և Թաֆալոս. որ է Բարդաղ լեառն. յելից հարաւոյ սոցա ձգին Բուն Աղբր լերինքն ցՄասիս, այսինքն Սինէ–պաղ, Ատ–պաղ 11000', Զօրպաղ իբր 10500', Խալկէռ կամ Բամաղու 10000'։ Յելից սորա և գրեաթէ կից ամբառնան բարձրագոյնք լերանց Հայոց տիեզերահռչակն Մասիս, որ և գլխաւոր լերանցն Արարատայ, գրեաթէ կշռեալ 'ի կեդրոն Հայոց մեծաց, 16254', և գագաթն բարձրագոյն քան զամենայն անխաղաց և շեղջաձեւ լերինս վերացեալս 'ի դաշտավայրէ. յելից հարաւոյ ունի զՓոքրն Մասիս 12284'. յորոյ հարաւոյ կան լերինք Արտաղու կամ Մաղուայ. ըստ արևելից հիւսիսոյ Թաֆալոս 8982', և ըստ արևմտից հիւսիսոյ Դաղ–պասոն լեառն։

Է. ՋՐԲԱԺԻՆՔ ԱՐԱԾԱՆԻՑ կամ Մուրատայ և Տիգրիսի. ունի լերինս ոչ սակաւ բարձունս և խիտս, և թեպէտ ոչ միայոցս, այլ մերձ ընդ մերձ, որովք ձգի մինչև 'ի խառնուրդս Մուրատայ յԵփրատ. սկիզբն լերանցս համարելի է Ալա–պաղ (Ծաղկաց լ.) 10000' կամ աւելի, յորմէ բղխէ արևելեանն Եփրատ, այսինքն Արածանի. 'ի հիւսիսոյ ունի զնպաստ անջատ լեառն, և ըստ հարաւոյ պարակցի լերանց Վանայ. յարևմտից սորա Էրնիկ լեառն, և ըստ հարաւոյ մոլոր լերինք Բաղնոցի, Մելազկերտու, Լիզայ։

9. Ի հարաւոյ սոցա նոյնպէս և դաշտին Մշոյ է Ը. ՊԱՐ ԼԵՐԱՆՑ ԱՂՁՆԵԱՑ որ են ոստք մեծագօտի Տաւրոսական լերանց, ըստ նախնեաց. Խոյտ, Սասուն, Աղտ–Էլ, Գոլ 6400', Խուլ, Տարոնոյ. յորոց մոլոր ընդ մէջ Արածանւոյ և օժանդակաց Տիգրիսի, լերինք Դ Հայոց՝ Կոհէր կոչեցեալ 'ի հնումն, և այժմ կալեալք 'ի Քրդաց, և մասն 'ի վերնակս գրեալ Սիվան–Մաուէնի, Բալուայ և Խարբերդու, յորում Մասպաս կամ Մասդոր, Աւբնտրի, Սորբ–Մեղ. և Մուղիր յարմունն Եփրատայ. բաղում և այլ անջատ լերինք ընդ մէջ Եփրատայ և օժանդակաց Տիգրիսի ցգետն Բալիշու, ընդ որս և բարձրն Խարզան Աղձնեաց ընդ մէջ Բալիշուն և Պագման գետոյ. և յայնկոյս սորին լերինք Ծոփաց Մեծաց Հաղրոս, Էլիէ (Անգղ), և Աբղնի լերինք. ընդ սոսին գրեալ են և որ 'ի հարաւոյ Աբղնի և Տիգրիսի Մէհրոպ լեառն երկայնանիստ, և լերինք Ընքուշայ և Ջերմելկայ։ Եւ ըստ սոցին հարաւոյ լերինք Տիարպէքիրու Գարաճա և այլք, հատուածք Տաւրոսի միջասահմանք Հայոց և աշխարհաց Եփրատացւոց և Միջագետաց։

10. Ը. ԼԵՐԱՆՑ ՎԱՆԱՑ, յայս անուն խմանամք զլերինս որ ամենուստ շրջապատեն զծովն սակաւ մը զանեաց տարակայութեամբ, թողլով և 'ի միջի անջատ լերինս. հիւսիսակողմանն լերինք յԱլաստաղ խառնին, և 'ի նմին կողման է բարձրագոյնն ամենայն շրջափակի լերանցս Սիֆան–պաղ, որ և քան զյոգունս 'ի լերանց աշխարհիս բարձր է և մշտաձիւն, այլ ոչ է ջափեալ և թուի 12–13000'. յարևմտից սորա և յարևմտեան հիւսիսային ծայր ծովուն զնաղուկ լճաւ բոլորեալ են լերինքն որպէս զդաշտացեալ բաժակաւ հրաբխի, այլ ժամուք ինչ տարակաց, յորոց է և Պէլէնճան լեառն. իսկ ընդ հարաւ կոյս բոլորին լերինք զծովոնն 'ի միջավայրի ունելով զնեմրոտ լեառն, յորոյ հարաւոյ